Հոլմս – Հաւանաբար ամենայայտնի մէջբերումը Ամերիկեան Հասարակական Իրաւունքի մէջ – “ Օրէնքի կեանքը Փորձն է ոչ թէ Տրամաբանութիւնը “:

Իրաւաբանութեան բնոյթը, որպէս մասնագիտութիւն

Պատճառը՝ թէ ինչու՞ է այն կայանում մասնագիտութիւն, ինչու՞ են մարդիկ վճարում իրաւաբաններին իրենց փոխարէն վիճաբանելու, կամ խորհուրդ տալու համար, կայանում է նրանում, որ այնպիսի հասարակարգում ինչպիսին մերն է, հասարակական ուժերի կառավարումը որոշ դէպքերում վստահուած է դատաւորներին, եւ, եթէ յարկ լինի, ամբողջ պետութեան ջանքերը կը ներդրուեն նրանց վճիռներն եւ որոշումներն կատարելու համար:

2. Օրէնքը, որպէս կանխորոշում, թէ երբ է պետութիւնը ուժ գործադրելու

“Վերցրնենք հիմնահարցը թէ Ինչ՞ է ներկայացնում իրենից օրէնքը: Որոշների կարծիքով, դա այն է, ինչը տարբերւում է Մասաչուսեցի կամ Անգլիայի դատարաններում ընդունած որոշումներից, դա փաստարկների համակարգ է, էթիկական սկզբունքների, կամ աքսէոմների, կամ աւելի վատ որոշումների հետ համընկնող, կամ ոչ եզրակացութիւն: Դիտելով մեր ընկեր “վատ մարդու” տեսանկիւնից՝ կը հասկանանք, որ նա անտարբեր է աքսէոմների եւ եզրակացությունների նկատմամբ, սակայն շատ է ցանկանում իմանալ, թէ իրականում ի՞նչ կ'անէին Մասաչուսեցի կամ Անգլիայի դատարանները: Ես հակուած եմ այդ կարծիքին: **Օրէնք բառի տակ Ես ի նկատի ունեմ կանխատեսումները, դատարանի իրական գործողութիւնների վերաբերեալ եւ ոչ աւելին”:**

- Holmes, The Path of the Law, 10 Harvard Law Review 457 (1897). http://www.constitution.org/lrev/owh/path_law.htm

Մարդիկ ցանկանում են իմանալ, թէ ի՞նչ հանգամանքներում եւ որքանո՞վ է իրենցից ուժեղ այդ համակարգին հանդիպելու վտանգի գործօնը, եւ հետեւաբար անհրաժեշտ է դառնում ընկալել, թէ ե՞րբ պէտք է վախենալ այդ ուժից: Այս դէպքում մեր ուսումնասիրութեան առարկան է դառնում կանխորոշումը՝ հասարակական ուժի գործելու յաճախականութիւնը դատարանների միջոցով:

Եթէ ցանկանում էք գիտենալ օրէնքները, եւ ոչ աւելին, պէտք է դիտարկէք այն “վատ մարդու” տեսանկիւնից, օրին հետաքրքիր են այդպիսի գիտելիքները միայն նիւթական հետեւանքները կանխատեսելու համար, եւ ոչ թէ “լաւ մարդու” տեսանկիւնից, որը, օրէնքի սահմաններում կամ նրանցից դուրս գործելու հիմքերը գտնում է խղճի աղօտ համոզմունքներում:

Օրէնքը որպէս կանոն գործողութեան հետեւանք է:

Պարզ երեւում է, որ “վատ մարդը”՝ ոչ պակաս քան “լաւը”, ցանկանում է խուսափել հասարակական ուժերի հետ բախումներից, եւ այդ պատճառով կարելի է պարզ տեսնել բարոյականութեան եւ օրէնքի տարբերութեան գործնական կարեւորութիւնը: Մարդ, որի համար կարեւոր չեն էթիկայի կանոնները, որոնցով առաջնորդւում են իր հարեւանները, ամէն դէպքում բաւականին կարեւորում է այն, որ ստիպուած չլինի վճարելու գումարներ, կամ եթէ կարողանայ, հնարաւորինս խուսափի բանտից:

Եթէ դիտենք մեր ընկեր “վատ մարդու” տեսանկիւնից, կը հասկանանք, որ նա անտարբեր է աքսէոմների եւ եզրակացութիւնների նկատմամբ, բայց շատ է ցանկանում իմանալ, թէ իրականում ի՞նչ կ'անէին Մասաչուսեցի կամ Անգլիայի դատարանները: Ես հակուած եմ այդ կարծիքին:

Հասարակութիւնը վճարում է վնասների դիմաց, եւ պարտաւորութիւնների խնդիրը, եթէ բաւական խորանանք այդ հարցի մէջ, իրականում կայանում է նրանում, թէ որքան ցանկալի է որ հասարակութիւնը երաշխաւորի այն մարդկանց ապահովութիւնը, որոնց աշխատանքն օգտագործում է:

3. Օրէնքը Տրամաբանութիւն չէ, այլ Աւանդոյթներ, Պատմութիւն, Նախադէպ

Օրէնքի կեանքը Փորձն է ոչ թէ Տրամաբանութիւնը

Կարելի է տրամաբանական ձեւ տալ ցանկացած եզրակացութեանը: Միշտ էլ կարելի է պայմաններ ենթադրել պայմանագրում: Բայց ինչու՞ ինչ-որ բան ենթադրել: Դա որեւիցէ համայնքի կամ դասի վերաբերեալ ձեր համոզմունքների պատճառով է, որեւիցէ ռազմավարութեան նկատմամբ ձեր կարծիքներն են, կամ կարճ ասած, ձեր վերաբերմունք է մի հարցի, որը չի ենթարկւում կոնկրէտ քանակական հաշուարկների, եւ հետեւաբար չի ենթարկւում յստակ տրամաբանական լուծումների: Այդպիսի հարցերը իրական մարտի դաշտեր են հանդիսանում, որտեղ միջոցները չեն ստեղծուած որոշումների համար, որ ճիշտ լինեն բոլոր ժամանակներում եւ, որտեղ որոշումները մարմնաւորում են միայն տուեալ մարմնի նախասիրութիւնները, կոնկրէտ տեղում եւ ժամանակում: Մենք չենք գիտակցում, թէ որքան ծաւալուն է մեր օրէնքի այն մասը, որը ենթակայ է վերանայման՝ հասարակական գիտակցութեան, սովորոյթների չնչին փոփոխման դէպքում:

Ներկայումս շատ դէպքերում, եթէ ցանկանում ենք հասկանալ, թէ ինչու՞ է օրէնքի կանոնը ստացել որոշակի ձեւ, քիչ թէ շատ ձգտում ենք իմանալ, ինչու՞ այն ընդհանրապէս գոյութիւն ունի՝ անդրադառնում ենք Աւանդոյթներին:

Օրէնքի տրամաբանական ուսումնասիրութիւնը մեծ մասամբ պատմութեան ուսումնասիրություն է: Պատմութիւնը պէտք է կազմի ուսումնասիրման մաս, քանի որ առանց նրա մենք չէինք կարողանայ իմանալ կանոնների ճշգրիտ ծաւալները, որոնք իմացութիւնը պարտադիր է մեզ համար: Այն ռացիոնալ ուսումնասիրութեան մասն է, քանի որ հանդիսանում է առաջին քայլը դէպի կրթուած թերահաւատութիւնը, այսինքն՝ դէպի այդ կանոնների արժէքների մտածուած վերանայումը:

4. Օրէնք, Բարոյականութիւն, Ընտրութեան թէորիայ

Օրէնքը, եթէ բարոյականութեան մաս չէ, ապա սահմանափակուած է նրանով:

Օրէնքը չի կարող պահանջել աւելի լաւ արդարացում, քան մարդու հիմնական բնազդները:
Գիտենք, որ այն ամէնի համար ինչ որ ունենք, վճարում ենք, եւ մեզ սովորեցրել են համեմատել ստացած արտօնութիւնները կ'որցրածի հետ, եւ գիտենալ թէ ինչ ենք անում, երբ ընտրում ենք:

Մոլորութիւնը, որը ես մատնանշում եմ, այն հասկացութիւնն է, որ միակ ուժը օրէնքի զարգացման գործում տրամաբանութիւնն է:

Դատաւոր Օլիւեր Վենդել Հոլմս Կրտսեր (1841-1935)

Մէջբերում

Օլիւեր Վենդել Հոլմս կրտսերը ծնուել է Բոստօնում, 1841թ. մարտի 8-ին: Նա կնքեց իր մահկանացուն իր 94-րդ ամեակից երկու օր առաջ: Նրա հայրը, Օլիւեր Վենդել Հոլմս աւագը բժիշկ էր, դասաւանդում էր բժշկութիւն Հարվարդում, եւ նովելների, բանաստեղծութիւնների, հումօրային էսսեների հեղինակ էր: Այսպիսով, Հոլմսը մեծացել է կրթուած եւ ապահովված ընտանիքում:

Հոլմսը Բոստօնում ընդունուեց մասնաւոր դպրոց, եւ ինչպէս իր հայրը՝ շարունակեց ուսումը Հարվարդում: Երիտասարդ Հոլմսը տպաւորուած չէր այդ տարիների Հարվարդով, նա ուսումնական կուրսը գտնում էր բթացնող (Աւելի ուշ Հենրի Ադամսը նշել է, որ “Հարվարդը քիչ է սովորեցնում եւ այդ քիչն էլ վատ”): Նա գործածում էր իր գրական տաղանդը, որպէս Հարվարդի ամսագրի խմբագիր եւ գրում էր բազմաթիւ էսսեներ: Նրա համալսարան աւարտելը նոյնիսկ մեծ հարցի տակ էր, քանի որ նա հրապարակաւ յանդիմանութիւն ստացաւ ֆակուլտետի կողմից դասախօսին “անյարգալից” վերաբերուելու

համար: Հոլմսը ակնյայտ է, որ ընդունեց դա որպէս հրապարակային վիրաւորանք եւ դուրս եկաւ՝ որպէսզի նախապատրաստուի Քաղաքացիական պատերազմին: Նրա ջոկատը միանգամից չմեկնեց ռազմաճակատ, եւ Հոլմսին համոզեցին վերադառնալ եւ ստանալ դիպլոմը:

Հարվարդը աւարտելուց յետոյ, Հոլմսը Քաղաքացիական պատերազմի ծառայութեան անցաւ: Նա եռակի վիրաւորուել էր ճակատամարտում եւ տառապում էր բազմաթիւ հիւանդութիւններով: Ու թէեւ նա յետագայում փառաւորում էր այդ տարիները, հրաժարուեց շարունակել ծառայութիւնը, երբ ժամկէտը լրացաւ: Հոլմսը ակնյայտօրէն եւ արդարացիօրէն գտնում էր, որ արել էր աւելին քան պարտաւոր էր, եւ գոյատեւել էր բազմաթիւ մարտերում, որպէսզի շարունակի փորձել ճակատագիրը:

Վերադառնալով Բոստօն, Հոլմսը որոշեց զբաղուել իրաւունքով, եւ ընդունուեց Հարվարդի Իրաւաբանական Դպրոց: Թէեւ սկզբում նա համոզուած չէր, որ իրաւունքը կը դառնայ իր մասնագիտութիւնը, սակայն շուտով նա ամբողջովին տրվեց ուսմանը եւ որոշեց, որ իրաւունքը կը դառնայ իր ամբողջ կեանքի գործը: Նա նվրիւեց իրաւունքին, բայց ոչ անպայման մասնաւոր աշխատանքին:

Պատադիր բանաւոր քննութիւնն անցնելուց յետոյ, Հոլմսը 1867թ. ընդգրկուեց Մասաչուսեցի Փաստաբանների Միութիւն: Յաջորդ տասնչորս տարիների ընթացքում նա զբաղւում էր իրաւունքով Բոստօնում: Բայց նրա սէրը դէպի իրաւաբանական գիտութիւնը առաւել քան միապաղաղ ամենօրեայ աշխատանքը, ակնյայտ էր այդ տարիների ընթացքում: Նա աշխատում էր “Քէնտի Մեկնաբանութիւնների” նոր հրատարակութեան վրայ՝ մի հսկայական աշխատութիւն, որը տեւեց չորս տարի, եւ դարձաւ “Ամերիկեան Լոու Ռիւիու” -ի խմբագիրը:

Հոլմսը ամուսնացաւ Ֆաննի Դիքսուելի հետ 1872 թուականին: Նրանք ճանաչում էին միմեանց, երբ Հոլմսը տաս տարեկան էր, եւ նա այն մասնաւոր դպրոցի սեփականատիրոջ աղջիկն էր, որտեղ սովորել էր Հոլմսը: Նրանց ամուսնութիւնը անզաւակ էր եւ շարունակուեց մինչեւ կնոջ մահը, 1929 թուականը:

Հոլմսին հրաւիրել էին կարդալու տասներկու դասախօսութիւն Ամերիկեան Իրաւունքի Հիմքերի մասին, որոնք հիմք հանդիսացան նրա “Հասարակական Իրաւունք” ամենայայտնի աշխատութեան համար՝ հրատարակուած 1881թ.: Հոլմսը հարցի տակ դրեց Անգլօ - Ամերիկեան արդարադատութեան մեծամասնութեան պատմական հիմքերը: Աշխատանքը պարունակում է ամենայայտնի մէջբերումը. “ Օրէնքի կեանքը Փորձն է ոչ թէ

Տրամաբանութիւնը”: Նա եկաւ այն համոզմունքին, որ նոյնիսկ հնացած եւ առաջին հայեացքից անտրամաբանական իրաւական ուսմունքները պահպան-վել են, քանի որ գտել են նոր կիրառում: Հին իրաւական ձեւերը յարմարուել են նոր հասարակական պայմաններին:

“Հասարակական Իրաւունք”-ի հրատարակումից շատ չանցած Հոլմսին առաջարկեցին իրաւաբանութեան դասախօսի պաշտօն Հարվարդում: Որոշակի լարուած բանակցութիւններից յետոյ, հիմնականում կապուած փողի հետ, քանի որ Հոլմսը հարուստ չէր եւ նրան եկամուտ էր պէտք ապրուստի համար, նա ընդունեց առաջարկը: Սակայն մէկ կիսամեակ դասաւանդելուց յետոյ հրաժարական տուեց, որպէսզի ընդունի նշանակումը Մասաչուսեց նահանգի Գերագոյն Դատարան: Թափուր պաշտօնը բացուեց Հանրապետական նահանգապետի ժամկէտի լրանալու ընթացքում, բայց քանի որ Դեմոկրատ էր նրան յաջորդողը, նշանակումը պէտք է ձեւակերպուէր շատ արագ: Սակայն Հոլմսի Հարվարդից հեռանալու փաստը որոշ զարմանք առաջացրեց, քանի որ նա հինգ հիմնական դասախօսներից էր, եւ նրան վարձատրելու համար յատուկ գումարներ էին հայթայթուել:

Հոլմսը աշխատեց Գերագուն դատարանում քսան տարի՝ դառնալով գլխաւոր դատաւոր: Նա սիրում էր աշխատանքը՝ իրաւաբանական ուսումնասիրութիւնները եւ գործերի “գրառումը”: Հոլմսը գտնում էր աշխատանքը դիւրին՝ յամենայն դէպս իր համար: Նա միանգամից էր ընկղմուում խնդրի բնոյթի մէջ եւ նրա մտաւոր կարողութիւնները շատ աւելի բարձր էին իր պաշտօնակիցներից: Հոլմսը երբեք համեստ չէր, յատկապէս երբ խօսքը վերաբերւում էր իր գերազանցութեանը համապաշտօնեայ դատաւորների նկատմամբ: Թէեւ նա երջանիկ էր Գերագոյն Դատարանում, սակայն ցանկանում էր աւելի շատ մարտահրաւէրներ եւ փառք:

Բարձրագոյն մասնագիտական առաջընթացի հնարաւորութիւնն եկաւ 1902 թուականին, երբ նախագահ Թէոդոր Ռուզուելտը նշանակեց նրան աշխատելու Միացեալ Նահանգների Գերագոյն Դատարանում: Նրա նշանակումը կարող էր երբեք էլ տեղի չունենալ, եթէ դատարանում “New England”-ի աթոռը թափուր չլինէր Ռուզուելտի պաշտօնավարութեան ընթացքում: Ե'ւ Ռուզուելտը, ե'ւ Հոլմսը Մասաչուսեցի սենատոր Հենրի Քեբոտ Լոջի ընկերներն էին: Լոջը համոզեց Ռուզուելտին, որ Հոլմսը “ապահով” է՝ այսինքն բարեացկամ է Ռուզուելտի առաջադիմական քաղաքականօթյեանը: Ռուզուելտը յետագայում ափսոսաց նշանակման համար, քանի որ Հոլմսը մասնակցեց նրա որոշ նախաձեռնութիւնների դադարեցմանը:

Օլիւեր Վենդել Հոլմս կրտսերը ծառայեց Գերագոյն Դատարանում երեսուն տարի, առաւել քան որեւէ մէկը: Նրան անուանում էին “Մեծ Դիսիդենտ”, քանի

որ նա յաճախ էր գժտւում իր համագործակից դատաւորների հետ եւ կարողանում էր պերճախօսութեամբ արտայայտել իր անհամաձայնութիւնը: Լուիս Բրանդեն յաճախ էր միանում Հոլմսի քննադատութիւններին, եւ նրանց հայեացքները մի քանի տարուայ ընթացքում, դառնում էին մեծամասնութեան կարծիքը: Վատառողջ լինելու հետեւանքով Հոլմսը պաշտօնաթող եղաւ 1932թ. ինսունամեայ հասակում: Նա մահացաւ 1935թ. եւ աճիւնը տեղադրուեց իր կնոջ կողքին՝ Առլինգթոնի ազգային գերեզմանատանը:

Աւելի քան վաթսուն տարիների ընթացքում գրելով օրէնքի մասին, Հոլմսի իրաւաբանական փիլիսոփայութիւնը զարգացում ապրեց: Սկզբում նա հակուած էր տրամաբանական, սիստեմատիկ կամ “գիտական” կ'ոնցեպցիային: Բայց ժամանակի ընթացքում նա յանգեց այն կարծիքին, որ օրէնքը աւելի շուտ որոշումների հաւաքածու է, որը արտացոլում է առանձին դատաւորների վճիռները կոնկրէտ գործերում: Այսպիսով՝ օրէնքի աճը փորձն է, ձեւաւորուած օրուայ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող իրական վէճերի արդիւնքում:

Շատերի կողմից ընդունուած, որպէս “լիբերալ”, քանի որ հաւատում էր խօսքի ազատութեանը եւ աշխատաւորների համախմբուելու իրաւունքին, Հոլմսը շատ պահպանողական էր վիրաւորանքի վերաբերեալ գործերի իր տեսակէտով: Նա կողմնակից է, որ որոշում կայացնելիս, դատարանը պէտք է գերակայութիւն տա օրէնսդրի քաղաքականությեան կողմնորոշմանը:

Հոլմսը համարւում է Ամերիկեան Իրաւունքի հսկաներից մէկը: Ոչ միայն այն պատճառով, որ այդքան լաւ էր գրում, այլ նաեւ գրել է բազմաթի'վ աշխատութ-յուններ երկար տարիների ընթացքում: Իրաւաբանը, որը Հոմսից մէջբերում է փնտրում՝ միշտ գտնում է: Նոյնիսկ Վաշինգտոնի Հարկային Տեսչութեան շէնքին ամրագրուած են նրա յայտնի հետեւեալ խսքերը. “Հարկերը այն գինն են, որը մենք վճարում ենք քաղաքակիրթ հասարակութեան համար”: